

Պ. ԿԱՐԵՆԻ

ՀՈՒԱՍՏԱՆԻ  
ԿՈՄՅԵՐԵՑՄԵՐԻԹՑՈՒԸ  
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՄԱՐՏԵՐՈՒՄ

ԱԼԻՎԵՐԵՑ

1934


ՑԵՐԵՎԱՆ

23 JAN 2018

325.07 (47.333)

Պ. ԿԱԿԻՆՈՍ

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ  
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՄԱՐՏԵՐՈՒՄ



ԿՈՒՍԴՐՈՑ

1934

ՅԵՐԵՎԱՆ

## ԽՄԲՍ.ԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Համամիութենական կոմյերիտմիության 9-րդ համագումարը նշեց, վոր ՀամլկՅՅԵՄ անդամների ծանոթությունը կիՄ-ի արտասահմանյան սեկցիաների աշխատանքներին՝ չափազանց անբավարար է։ Դրանից յեղնելով համագումարը ՀամլկՅՅԵՄ-ի բոլոր կազմակերպությունների առաջ մարտական խնդիր գրեց մշտապես հաղորդակից լինել կիՄ-ի արտասահմանյան սեկցիաների՝ կարպիտավաստական տեսողի պայմաններում մղած հերոսական պայքարին ու այդ հիման վրա ուժեղացնել ՀամլկՅՅԵՄ-ի ինտերնացիոնալ կազն ու ամեն մի կոմյերիտականի ինտերնացիոնալ դաստիարակությունը։

9-րդ համագումարի այդ վորոշումը դժբախտաբար չափազանց անբավարար է կիրառվում Հայաստանի կոմյերիտական կազմակերպություններում։ Մինչդեռ կիՄ-ի արտասահմանյան սեկցիաների աշխատանքներին ծանոթ լինելը, նրանց ամենորյա պայքարով ապրելը, նրանց նկատմամբ շեֆական պարտավորությունները կատարելը հանդիսանում են կոմյերիտմիության ինտերնացիոնալ աշխատանքի կարևորագույն ողակներից մեկը։ Այդ աշխատանքների թուլության պատասխանատվության մի մասն անպայման ընկնում



1-34349р

Н. КОКИНОС

Комсомол Гредин в классовых боях

Партиздан Эривань 1934 г.

ե և մեր հրատարակչությունների վրա, վորոնք կոմի-  
յերիտմիությանը չեն մատակարարում ԿիՄ-ի ար-  
տասահմանյան սեկցիաների աշխատանքն ու պայ-  
քարը պատկերացնող համապատասխան գրակա-  
նություն։ Ընկը կոլինոսի ներկա բրոցուրի հրա-  
տարակությունը ԿիՄ-ի լավագույն սեկցիաներից  
մեկի՝ Հունաստանի կոմյերիտմիության աշխա-  
տանքի, նրա պայքարի և առանձնապես բուրժու-  
ական բանակը քայլայելու համար տարվող հակա-  
միլիտարիտական պայքարի ներսական եջերի  
մասին՝ այդ իսկ տեսակետից չափազանց անհրա-  
ժեշտ ե, մանավանդ վոր ՀՀԿՅԵՄ կենտկոմի վո-  
րոշմամբ և ԿիՄ-ի Գործկոմի հաստատումով՝ Հա-  
յաստանի կոմիերիս սիուրյունը վեցրեց Հունաս-  
տանի կոմյերիտմիության ըեծուրյունը։ Հայաս-  
տանի կոմյերիտական կազմակերպությունները  
պետք ե արդարացնեն այդ շեֆությունը։ Դրա հա-  
մար առաջին հերթին ամեն մի կոմյերիտական  
պետք է իմանա, թե իր յենթաշեֆ կազմակերպու-  
թյունն ինչպես ե պայքարում, ինչո՞վ ե ապրում։

Ընկը կոլինոսի այս բրոցուրը, ինարկե, Հու-  
նաստանի կոմյերիտմիության սիստեմի յենթարկ-  
ության պատմությունը չե. հեղինակը չեր ել կա-  
րող տալ այլպիսի շարադրություն, վորովհետեւ  
նման փորձի բացակայությունը մինչ այժմ չա-  
փազանց գծվարացնում ե այդ աշխատանքը

պահանջում ե յերկար ուսումնասիրություն ու  
ժամանակի ընկը. կոկինոսի այս բրոցուրն ավելի  
շուտ Հունաստանի կոմյերիտմիության հերոսա-  
կան պայքարի ամենանշանակալից եպիզոդների,  
նրա աշխատանքի ձևերի ու մեթոդների լավա-  
գույն որինակների շարադրումն ե, որինակներ,  
վորոնք հաստուկ են վոչ միայն Հունաստանի,  
այլև առավել կամ նվազ ուժեղությամբ՝ ԿիՄ-ի  
անլեգալ համարյա բոլոր կազմակերպություն-  
ների համար։ Այդպիսով ներկա բռնըուրի ըն-  
թեցողն ընդիմառ պատկերացում կունենա  
նայել ԿիՄ-ի վյուս սեկցիաների աշխատանքի  
ու պայքարի ձեմքների ու մեթոդների մասին։

Այս բրոցուրի հրապարակումը պետք ե մի  
նոր խթան հանդիսանա Հունաստանի և Հայաս-  
տանի կոմյերիտական կազմակերպությունների  
միջև ինտերնացիոնալ կազի ամբացմանը, նպաս-  
տի շեֆական աշխատանքների ուժեղացմանը։

Այժմ, քանի յերբեք, ՀՀԿՅԵՄ կազմակերպու-  
թյուններից, կոմյերիտական կոմիտեներից պա-  
հանջվում ե կոմյերիտմիության, աճող յերիտա-  
սարդ սերնդի ինտերնացիոնալ դաստիարակության  
գործը դմել իր պատշաճ բարձրության վրա։ Այ-  
ժմ, կապիտալիտական աշխահում հեղափոխական  
ճգնաժամի հասունացման, մասսայական հեղա-  
փոխական շարժումների վերելքի ու Փաշիտական

դաժան տեռորի պայմաններում,—յերբ մենք  
ԽՍՀՄ-ում արդեն իսկ կառուցում ենք անդաստա-  
կարգ սոցիալիստական հասարակություն,— լենի-  
նյան կոմյերիտմիության առաջ իր ամբողջ մեծու-  
թյամբ զրվում եր ամբողջ աշխատանքը ինտեր-  
նացիոնալիզմով շաղախելու և ամրացնելու խնը-  
դիքը, վորովհետեւ ողբա մեջ ենքա ուժը, դրա մեջ ե  
նքա հզորությունը» (Ստալին): Այժմ, քանի յերբեք,  
իր ամբողջ սրությամբ պետք է դնել ու մինչև վերջը  
կենսագործել մեծ առաջնորդ ընկ. Ստալինի Համ-  
եկեմ-ին տված այն մարտական ցուցումը, վոր  
«Հարկավոր ե, վորպեսզի ինտերնացիոնալիզմի  
վոգին միշտ սավառնի կոմյերիտմիության վրա:  
Հարկավոր ե, վորպեսզի մեր յերկրի պրոլետա-  
րիստի պայքարի հաջողություններն ու ձախոր-  
դությունները կոմյերիտականների գիտակցու-  
թյան մեջ կապվեն միջազգային հեղափոխական  
շարժման հաջողությունների ու ձախորդություն-  
ների հետ: Հարկավոր ե, վորպեսզի կոմյերիտա-  
կանները սովորեն դիտել մեր հեղափոխությունը  
վոչ թե վորպես ինքնանպատակ, այլ վորպես միջոց  
և հենարան՝ բոլոր յերկրներում պլոյետարական  
հեղափոխության հաղթանակի համար» (Ստալին):  
Ահա ինչ և պահանջվում մեր կոմյերիտական  
կաղմակերպություններից, ամեն մի կոմյերի-  
տականից:

Ա. Կ.

## ՊԱՌԱԿՏՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՇՈՎԻՆԻԶՄԻ ՀԵՏ ՅԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության անմի-  
ջական աղդեցության տակ Հունաստանի բանվո-  
րական շարժումը ևս սկսում է յենթարկվել բյու-  
րեղացման: Զախ տարբերը դլուխ են բարձրաց-  
նում ոպորտունիզմի և սոցիալ-շովինիզմի գեմ  
նրանցից իրենց կապերը խղելու համար:

Արդեն հունաստանի սոցիալիտական բանվո-  
րական կուսակցությունն իր Ա համագումարում  
(1920 թվին) միաձայն փորձում է կայացնում  
Կոմունիստական ինտերնացիոնալի շարերը միտ-  
երթ մասին և դառնում ենքա պաշտոնական  
սեկցիան: Այդ ժամանակաշրջանում ինչպես սո-  
ցիալիստական կուսակցության, նույնպես և սո-  
ցիալիստական յերիտասարդական խմբերին առա-  
վելապես հարում ելին մանր-բուրժուական տար-  
բերը: Այդ պատճառով ել զրեթե գոյություն չուներ  
վորեկ կազ բանվորական և չքավոր գյուղացիա-

կան յերիտասարդական լայն մասսաների հետ։  
1919 թվից մինչև 1921 թվականը գումարվում են սոցիալիստական յերիտասարդական կազմակերպության Յ կոնֆերենցիաներ՝ ազգային մասշտառք։ Այդ կոնֆերենցիաները հատկապես զբաղվում են սոցիալիստական յերիտասարդական շաբաթում սիամանական դեկավարության տակ կազմակերպիլու և առաջ տանելու խնդիրներով։ Այդ կոնֆերենցիաների արդյունքը յեղավ այն, որ ընտրվեց առայժմյա կենտրոնական քարտուղարություն (բյուրո), վորի վրա պարտականություն դրվեց կատ հաստատել Կոմունիստական Յերիտասարդական Խնտերնացիոնալի՝ ԿիՄ-ի հետ և ճրավիրել Հունաստանի կոմյերիտմիության առաջին հիմնադրական համագումարը։ Մինչ այդ, ճեղափոխական շարժումները, հակապատերազմական յելույթներն աճում ու մեծանում են ամբողջ Հունաստանում, վորոնց ընթացքում մեծանում են նաև սոցիալիստական կուսակցության և սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների գործունեյության ասպարեզն ու դերը։ Սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների այդ շրջանի կարևորագույն աշխատանքն եր հեղափոխական կազմակերպության պայքարը բանակում։ Սակայն, հակառակ կուսակցության շարքային անդամների աշխատ

և ակտիվ աշխատանքի, վորի շնորհիվ պատերազմի ճակատում զինվորները մասսայականորեն հրաժարվում եյին պատերազմելուց և, գեն շղթառում իրենց հրացանները՝ պահանջելով անմիջապես դադարեցնել պատերազմը և հաստատել խաղաղություն, կուսակցության ոպորտունիստական դեկավարությունը բավարարվում եր միայն «կորի պատերազմը» և այլ ոպորտունիստական լրզունգներով և չեր դեկավարում ձախացող մասսաների տարերային մասսայական-հեղափոխական շարժումը, չեր պայքարում պատերազմը քաղաքացիական կուլի վերածելու՝ բուրժուազիայի գիտատուրայի տապալման և բանվորագյուղացիական իշխանության հաստատման համար։ Բոլշևիկյան հիմնական սկզբունքային խնդիրներին ոպորտունիստական մոտեցումը, պատերազմի հարցում հստակ լենինյան գրույթները չհասկանալը սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների համար հանդիսացան վճռական և ծանր սխալ։ Կուսակցությունն ու սոցիալիստական յերիտասարդական միությունները չկարողացան արդարացնել ամենապատասխանատու ըջանում իրենց հեղափոխական ավանդարդի դերը։

1922 թ. հետո թե կուսակցության և թե կոմսոմոլի ազգեցությունն ավելի յե մեծանում

բանվոր դպսակարգի և մասնավորաբար աշխատավոր յերիտասարդության վրա: 10 տարվա պատերազմը (կապիտալիստական Հունաստանը պատերազմն սկսեց 1912 թվից, վորը նրա համար տեսեց մինչև 1922 թիվը) Հունաստանը՝ թե տընտեսապես և թե քաղաքականապես ծանր քայլայման հասցրեց: Քաղաքում և գյուղում տիրում եր տնտեսական սուր ճգնաժամ: Ժողովրդական տնտեսության քայլայման զուգընթաց մեծ չափերի ելին հասել մասսաների աղքատացումն ու գործազրկությունը: Ցեղ այդ տնտեսա-քաղաքական ճգնաժամի հողի վրա արագ կերպով բարձրանում և աճում ե հեղափոխական շարժումը, իր ամբողջ հասակով ծավալիում գյուղացիական շարժումը: Հողի ու ազատության համար վոտքի յելած գյուղացիական մասսաների յելույթները շարունակվում են 1922 թ. մինչև 1924 թիվը, յելույթներ, վորոնք զինված ապստամբությունների բնույթ ելին ստացել մի շարք քաղաքներում: Գյուղացիությունն անցնում է կալվածատիրական հողերի բռնի գրավման, կալվածատիրական հողերի բռնի գրավման, կալվածատիրերի ու նրանց որգանների գյուղից վտարմանը: Այն ժամանակ տիրող Պլատիրասի կառավարությունն որենքով ստիպված յեղավ հաստատել այդ գրավումները՝ վորպես գյուղացիական ոեֆորմ, տարածել այն ոայոնից-ոայոն՝ համա-

պատասխան շրջանի գյուղացիական մասսաների մարտական տրամադրությունների համաձայն: Մյուս կողմից քաղաքում գործադրուների լայն տարածումը, մասնավորաբար 1923 թվի ընդհանուր գործադրուլը և 1924 թվի մայիսեկցան արյունալի դեպքերը նոր առիթ հանդիսացան ավելի ու ավելի սրելու հակամարտությունները բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Այս շրջանում լուծվում են բուրժուա-դեմոկրատական հեղափոխության միջանկ հիմնական խնդիրները, միավետության անկումը, բուրժուա-դեմոկրատական համբավետության հոչակումը Հունաստանում, միավետական տարրերի բանակից վտարումը, գյուղացիական ռեֆորմը և այլն: Այդ բոլոր նոր հարաբերությունների առաջացման, առցիալական տեղաշարժերի շրջանում ե, վոր Հունաստանի կոմյերիտությունը կազմակերպչորեն ձևավորվում և վերջնականապես մտնում է ԿԻՄ-ի մարտական դրոշի տակ:

## ՀԱԿԱՄԻԼԻՏՐԻՍՐԻՍՏԱՎԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻԲԵՐՈՒԽ

Հունաստանի կոմյերիտության առաջն հիմնադրական համագումարը գումարվեց Սալոնիկ քաղաքում 1922 թվի նոյեմբերի 28-ին: Հունաստանի կոմյերիտությունն իր հիմնադրման

առաջին իսկ որերից սկսում եւ ակտիվ մասնակցություն ցուցաբերել որեցոր աճող հեղափոխական յելույթներին: 1923 թ. ընդհանուր գործազուրկ ընթացքում Հունաստանի կոմյերիտմիությունը գտնվում է մարտնչող պրոլետարիատի առաջին շարքերում, իր հետ տանելով նաև հազարավոր յերիտասարդ բանվորների և բանվորությունների: 1924 թվին ծխախոտի արդյունաբերության բանվորների հետ միատեղ Հունաստանի կոմյերիտմիությունը կազմակերպում է ծխախոտի յերիտասարդ բանվորների մասնակցությունը գործատերերի դեմ մղվող պայքարին: Միաժամցիւակուժեանը եւ կոմյերիտմիության հակամիլիլիտարիստական և հակապատերազմական աշխատանքը: Դեռ նախքան այդ շարժման կազմակերպչական ձևավորումը՝ փոքր-ասիտական ճակատում սկսում եւ լույս տեսնել հակամիլիտարիստական ձեռագիր «Արվիլա» թերթը, վորը կարևոր դեր եւ խաղում բուրժուական բանակի կազմալուծման գործում: 1922 թվին արդեն կազմակերպվում են նույն գինվորների առաջին ցույցը՝ Ռոդոսոն հաղամում: Կարմիր գրոշակները ձեռներին զինվորները պահանջում ենին իրենց անմիջական ազատ արձակումը զինվորական ծառայությունից: Այստեղ պետք եւ նշել վոր Հունաստանի կոմյերիտմիության վողջ պատմությունը լի յե

պատերազմի և միլիտարիզմի դեմ մղած պայքարի հերոսական որինակներով: Հունաստանի կոմյերիտմիությունն իր կազմակերպման առաջին իսկ որերից մասնավոր ուշադրություն է դարձրել զինվորների և նախավաստիների անմիջական պահանջներին ու այդ պահանջների շուրջը կազմակերպել և զեկավարել են ըրանց պայքարն ընդդեմ միլիտարիզմի՝ բուրժուական բանակը կազմալուծելու նշանաբանի տակ: 1922 թվին հեղափոխական նախաստիների զեկավարությամբ նախատիները գիւերով ցույց են կազմակերպում յեվ ջարդ ու փոռու անելով սպայական տների ապակիները՝ պահանջում են 24 ժամվա ընթացքում իրենց ազատ արձակումը:

Այս մասսայական յելույթն այնքան է սարսափեցնում զորահրամանատարությանը, փոր զորահրամանատարությունը հարկադրվում է անմիջապես նախատիների ազատ արձակման հրամանը տալ: 1923 թվին հակառակ այն իրողության, վոր պատերազմը դադարում եր, զինվորները զեր հրացանը ձեռին մնում ելին զորանոցներում: Կոմյերիտմիությունն այդ պայմաններում հանգես և զալիս անմիջականորեն զորակոչեկներին զինվորական ծառայությունից ազատ արձակելու պահանջով, զինվորների մեջ ծավալելով հակամիլիտարիստական աշխատանք: Այդ կազմակ

ցությամբ Հունաստանի մի շարք քաղաքներում տեղի ունեցան մասսայական զինվորական միտինգներ, իսկ Աթենքի պատերազմական նախարարության շենքի առաջ կազմակերպվեց աննախընթաց զինվորական ցույց: Այդ բոլորից հետո մասսաների ճնշման տակ ուղղմական դիկտատոր գեներալ Բասդիրասը նորից հարկադրվեց ազատ արձակել 1922 թվականի բոլոր զորակոչիներին:

1925 թվի սկզբներին Հունաստանի աշխատավորական մասսաները դարձյալ դանվում ենին մի յերկրորդ պատերազմի սպառնալիքի առաջ: Սուանձնապես Սալոնիկի կոմյերիտմիությունը ծավալում և ուժեղ հակապատերազմական աշխատանք, իր պայքարի մեջ ընդդրկելով վոչ միայն աշխատավոր յերիտասարդության, այլ նաև զինվորների ճնշող մեծամասնությունը: Այդ կապակցությամբ 100-ից ավելի զինվորներ ձերբակալվեցին, փորոնցից 24-ը կոմունիստներ, նրանք դատապարտվեցին տասնյակ տարիների բանտարկության և աքսորի՝ հունական Եպիսկոպոսի «Կալվակի» կոչված թիարանում: Այսուամենայնիվ այդ պայքարի արդյունքը յեղափ այն, փորմիքանի որից ազատ արձակվեցին 1923 թ. գորակոչիները: 1924 թվի Աթենքի մայիսեկան ցույցերում, — փորոնք արյունալի դեպքերի

վերածվեցին, — յերիտասարդ կոմունիստները գլուխ ըրկում եյին պայքարի առաջին շարքերում, ցույց տալով հեղափոխական անձնվիրության փայլուն որինակներ: Այս մասսայական յելույթների ժամանակ տասնյակ վիրավորների և միքանի սպառնալիքների մեջ եր նաև կոմյերիտական լնկ. Բարասկեվայսիսը:

## ՄԻՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հունաստանի կոմյերիտմիության 2-րդ համագումարը տեղի ունեցավ Սալոնիկ քաղաքում 1924 թվի մարտի 15-ից 21-ը:

Իր ծագման ու կազմակերպման առաջին տարիներից մինչև 2-րդ համագումարը Հունաստանի կոմյերիտմիությունը ձևավորվել եր հին սոցիալ-դեմոկրատական կազմակերպչական հիմունքներով (տերիտորիալ սկզբունքով կազմակերպված զանազան խմբակներ): Նրա ամբողջ գործունեյությունը սահմանափակվում եր կոմունիզմի սկզբունքների պրոպագանդայով և աղիտացիայով: Հունաստանի կոմյերիտմիությունը բոլցելեցան կազմակերպչական սկզբունքներով գործարանային հիմքի վրա վերակառուցելու և գործարանային բջիջներ ստեղծելու ինդիքն, տուաշինագան լինելով, քննարկվեց 2-րդ համագումարում:

Սակայն առաջադրված ինդրի կենսագործումը չափազանց դանդաղ եր առաջ գնում և յերբ գեներալ Պանգալոսի զինվորական դիլտատուրան (1925—26) վրա հասավ, անհամեմատ թույլ դտավ Հունաստանի կոմյերիտմիությունը, վորը սերտուրեն չեր շաղկապիել բանվոր և չքավոր յերիտասարդական մասսաների հետ. Չնայած դրան, այս շրջանում Հունաստանի կոմյերիտական կազմակերպությունն անխնա պայքար ծավալեց իր շարքերի թե գաղափարական, թե կազմակերպչական և թե տեսական ամբացման համար. Նա անողոք պայքար մղեց իր շարքերը մաքրելու համար դասակարգայնորեն խորթ ու ոպուտունիտական այն տարրերից, վորոնք ուղում ելին միանալ շրդ ինտերնացիոնալին:

Հունաստանի կոմյերիտմիության այդ շրջանի հիմնական խնդիրն եր ակտիվացնել կոմյերիտական ներին, նրանց մասնակից դարձնել մարտնչող պրոլետարիատի ամենորյա դասակարգային պայքարին, դաստիարակել նրանց կոմունիզմի վորով կոմունիտական Յերիտասարդական ինտերնացիոնալի հեղափոխական տրադիցիաներով:

Այս շրջանում ստեղծվում ե հեղափոխական դրություն: Կովող ուժերը յերեք են՝ ա) խոշոր բուրժուազիան, բ) մանր-բուրժուազիան և գ) պրոլետարիատը՝ չքավոր գյուղացիության հետ միա-

տեղ: 1924 թ. ընկնում ե խոշոր բուրժուազիայի կառավարությունը (Պլաստիբաս) և քաղաքական ասպարեզի վրա հանդես ե գալիս մանր-բուրժուազիան, կազմելով «Ճախ» մի կառավարություն՝ Պապանասախովի գլխավորությամբ: Ինչպես միշտ, մանր-բուրժուազիան այստեղ ևս հետեղական ե իր պատմական դերին: Նա լուծում ե բուրժուազիմոկրատական հեղափոխության խնդիրները միայն: Սակայն հեղափոխական մասսաները գնում են ավելի առաջ: Սրբում ե դասակարգային պայքարը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Պրոլետարիատը չքավոր գյուղացիության հետ միատեղ՝ կովում ե հեղափոխականորեն լուծելու համար բուրժուազիմոկրատական հեղափոխության հիմնական խնդիրները: Այս շրջանում գյուղուն ունեյին բոլոր որյեկտիվ պայմանները բուրժուազիմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու համար: Սակայն բացակայում եր մի այլ ֆակտոր — թույլ ելին բանվոր գնաճակարգի հեղափոխական մասսայական կազմակերպությունները, չկային դասակարգային վճռական մարտերում կոփոված ու բոլշևիկանացած խամկուասակցություն ու կոմյերիտմիություն, վորոնք կարողանային կազմակերպել, զեկավարելու գլխավորել հեղափոխականացած մասսաների պայքարը բուրժուազիայի

Եշխանության տապալման և պրոլետարական դիկտատորայի հաստատման համար Հունաստանում:



Հնկ. Բանուսիար

## ՊԱՆԴԱԼՈՒՄ ԳԻԿՏԱՑՈՒՐՎՅԻ ԸՆԴՀԱՑԱԿՈՒՄ ԿՈՓՎՈՒՄ Ե ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՄՄԻՏՈՒՈՒԹՅՈՒՆԸ

Տապալվում ե մանը՝ բուրժուազիայի իշխանությունը և 1925 թվականի վերջերը զինվորական հեղաշրջում ե տեղի ունենում։ յերկում հռչակվում ե զինվորական դիկտատորա՝ Պանդալուսի դեկապարությամբ։

Արյան մեջ խեղդել հեղափոխական շարժումը, ցրել բանվոր դասակարգի մասսայական հեղուստական կազմակերպությունները, արգելել և բըռնի կերպով փակել կոմունիստական մամուլը, որենքից դուրս հռչակել և ջախջախել կոմկումն ու

կոմյերիտմիությունը, բանվորա գյուղացիական մասսաների հեղափոխական ավանդարդը, — ահա Պանդալուսի դիկտատորայի ձեռք առած միջոցները, վորոնցով մասնամբ ժամանակավորապես կայունացան բուրժուազիայի դիրքերն ընդդեմ պրոլետարիատի։



Հնկ. Մարքովիսիար

Պետք ե ասել, վոր կոմկուսի և կոմյերիտմիության համար, վորոնք գեռ արմատներ չունելին բանվորա գյուղացիական լայն մասսաների մեջ, պանդալույան դիկտատորան մի ուժեղ հարված եր։ Այնուամենայնիվ դիկտատորայի շրջանը հեղափոխական կազմակերպությունների և առաջին հերթին կոմյուսակցության և կոմյերիտմիության համար հանդիսացավ իսկական հեղափոխա-

կան աշխատանքի և բոլշեվիկյան կոփվածության տիրանալու -մի դպրոց։ Դադանի աշխատանքի դաժան դպրոցը, աշխատանքն անլեզալ պայմաններում, նշանակելի չափով նպաստեցին միության գաղափարական և կազմակերպչական ամրացմանը՝ միության շարքերից մաղելով մասր-բուրժուական, դասակարգայնորեն խորթ տարրերին։

Հունաստանի կոմյերիտամիության 3-րդ համագումարը գումարվեց Պանզալոսի դիկտատորայի տիրապետության ժամանակ, 1925 թվի դեկտեմբերի 25-ից մինչեւ 31-ը։ Համագումարը նշելով կոմյերիտական կազմակերպությունների՝ բանվորա-գյուղացիական յերիտասարդության լոյն մասսաների հետ կապված ջինելու հանդամանքը, մշակեց մի շարք կոնկրետ միջոցառություններ, անանլեզալ պայմաններում հեղափոխական մասսայական աշխատանք ծավալելու նորանոր ձևերու մեթոդներ։

1926 թվին, սեպտեմբերի 9-ին, Պանզալոսի դիկտատորայի տապալումից քիչ ժամանակ անց, յերբ յերկրում պատրաստվում եր նոր զինվորական հեղաշրջում՝ դեմոկրատական զինվորական գվարդիայի շարքերում, յերբ հանկարծ տարերային կերպով գործի եյին անցնում շարժման ղեկավարները՝ միլիտարիստները, —Աթենք քաղաքի յերիտասարդ կոմունիստները՝ անցած յերիտա-

սարդ բանվորների հեղափոխական պայքարի գլուխը, հերոսաբար մարտնչում եյին Փաշիստական այդ շարժման և կոնդիլիսի կառավարության դեմ։ Զինվորական նեղացրման այդ որը կույերիտականները գրավում են մեկ տանկ, զինաբանի են անում մաշիսներին յեվ միբանի ժամ պաւարված դրության մեջ են պահում կենտրոնական ներագրատունն ու փոստը։

Այդ շրջանը կոմյերիտամիության պատմության ամենանշանավոր շրջանն ե այն տեսակետից, վորթե անլեզալ աշխատանքի բովը և թե վերջին գեղքերը կոմյերիտամիությանը զինեցին հեղափոխական ընդհատակյա աշխատանքի փորձով, այն ժամանակ, յերբ արդեն նրա առաջ բացվում եր հեղափոխական մարտերի նոր հորիզոն։

## ԵՐԿՈՒ ՖՐՈՆՑՈՎ ՄՂՎՈՂ ՊԱՅՄԱՐՈՒՄ ԱՄՐԱՆՈՒՄ Ե ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌՅՈՒՆԵ

Հեղափոխական շարժախելուց հետո հունական բուրժուազիան կարողացավ մասնակիորեն կայունանալ և ձեռնարկեց իշխելու «զեմուլրատական» ձևերի կիրառմանը։ Այդ պայմաններում ե, վոր կոմկումն ու կոմյերիտամիությունն անցան լեզալ աշխատանքի սկսեց լույս տեսնել հեղափոխական մամուլը։ Այս շրջանում կոմյերիտամիությունը տանում է ուժեղ մասսայական աշխատանք, ուժեղանում և ամրանում և կազմակերպչու-

բեն, իսկ այս ժամանակաշրջանի նրա ամենակարևոր նվաճումն այն է, վոր նա արդեն թեակուում ե գործարանային բջիջների հիման վրա վերակառուցվելու, հեղափոխական մասսայական կազմակերպչական աշխատանք ծավալելու ըջանը, ամրանալով արդյունաբերության հիմնական միավարներում:

Պահպանուի գիլտատուրայի անկումից հետո, 1927 թվականին, վետրվարի 5-ից—6-ը գումարվեց կոմյերիտմիության մի կոնֆերենցիա. 1927 թվի վետրվարյան այդ կոնֆերենցիան բացառիկ նշանակություն ունեցավ վողջ Հունաստանի կոմյերիտմիության պատմության մեջ։ Փետրվարյան կոնֆերենցիայի վորումները նշանակու դեր խաղացին լիկվիդարիստների դեմ մղվող պայքարում յեզ ապա այդ կոնֆերենցիայում առաջին անգամ լինելով դրվեց մասսայական աշխատանքի, կրմերիսմիությունը բանվորական մասսայական յերիտասարդական կազմակերպության վերածելու խնդիրը, աջ ոպորտնիքի, սեկտանիզմի դեմ պայքարի ծավալման, կազմակերպության սահմանափակվածության հարթահարման խնդիրները։ Փետրվարյան կոնֆերենցիայի վորոշումներն այդ տեսակետից Հունաստանի կոմյերիտ կազմակերպությունների համար վճռական աշխադարձի ոկտոպ հանդիսացան,

վորովհետև դրանք հիմք ծառայեցին բանկուրա-  
գյուղացիական յերիտասարդության անհասական  
և քաղաքական պայքարը կազմակերպելու և ղեկա-  
վարելու գործում։ Դրանից հետո յե, վոր բոլոր  
քիչ թե շատ նշանակալից գործադուլային մար-  
տերում, միտինդներում, փողոցային ցույցերում  
և գյուղացիական հեղափոխական յելույթներում  
Հունաստանի կոմյերիտմիությունը վոչ միայն  
գտնվում ե պայքարի առաջին գծում, այլև իր  
հետ և տանում նաև բանվորա-գյուղացիական,  
յերիտասարդական լայն մասսաների։

1927 թվականին, ծխախոտի գործատերերի հայ-  
տարարած մեծ լրկառությունի որերին, յերիտասարդ  
ծխախոտագործ բանվոր-բանվորուհիները Սալոնիկի  
Դրամա և Կավալա քաղաքներում Հունաստանի  
կոմյերիտ և կոմյերիտմիության ղեկավարությամբ  
հերոսաբը պայքարեցին գործատերերի, վոստի-  
կանության և գործադուլաբեկ ֆաշիստների դեմ։  
Ծխախոտագործ բանվորների ընդհանուր գործա-  
ծի ամբողջ ընթացքում (հունիս 1928 թ.),  
գուլի ամբողջ ընթացքում և ուրիշ արդյունաբերական ճյու-  
ղորն ընդգրկեց և ուրիշ արդյունաբերական ճյու-  
ղերի բանվորներին, կոմյերիտմիությունը պայքա-  
րի առաջին գծումն եր։ Նա անմիջականորեն ղեկա-  
րի վարչություն գծումն եր։ Նա անմիջականորեն ղեկա-  
րի վարում եր 60,000 գործադուլավորների մեջ  
25,000 կազմող յերիտասարդ բանվոր-բանվոր-  
հիների գործադուլային պայքարը՝ դրանց համար

հատկապես մշակված տնտեսա-քաղաքական պահանջների հիման վրա:

Որեցոր ծագալվող գործադուլային շարժման հումկու ալիքն (1929 թվին) իր մեջ ե ներզրակում բանվորների ամենահետամնաց և անկազմակերպ նորանոր շերտեր (գործադուլներ կավիրոնում, Ելեկինայում, Ստրատոնիկիսում և Պիրեյի քիմիական արդյունաբերության միավորներում և այլն): Այդ գործադուլներին մասնակցում են 60,000 բանվոր-բանվորուհիներ, վորոնցից 20,000-ից ավելին յերիտասարդ բանվորներ ու բանվորուհիներ: Նրանք կոմյերիտմիության ղեկավարությամբ հերոսացար կովում են իրենց տնտեսա-քաղաքական շահերի համար: Այս մարտերում չունաստանի կոմյերիտմիությունն արդարացրեց բանվորա-գյուղացիական յերիտասարդական մասների հեղափոխական ավանդարդի և առաջամրտիկի իր մարտական կոչումը: Այս մարտերում չունաստանի կոմյերիտմիությունը ձեռնարկում ե հակա մասսայական աշխատանքի, նշանակալից քայլեր և անում դեպի առաջ՝ բանվորացիական յերիտասարդությունը նվաճելու ուղղությամբ:

1928 թվին չունաստանի կոմյերիտմիությունը կազմակերպում ե աշխատավոր յերիտասարդության տեղական համագումարներ Ստրոնի-

կում, Աթենքում, Վոլոսում, Քսանդրիում, Իրակլիում (Կրետե կղզում՝ նավահանգիստ քաղաք) և այլն, վորոնց մասնակցում են 800 ներկայացուցիչներ՝ ընտրված 8000 կազմակերպված և անկազմակերպ յերիտասարդ բանվորների և բանվորուհիների կողմից:

Աշխատանքի այդ վորձից հետո նույն տարին կոմյերիտմիությունը բաց ե անումնոր կամպանիա առանձին արդյունաբերական նյուղերի յերիտասարդ բանվորների կոնֆերենցիաներ կազմակերպելու լոգունգով: 16 վայրերում յերիտասարդական կոնֆերենցիաներ են կազմակերպվում, վորոնց մասնակցում են 940 ներկայացուցիչներ՝ ընտրված 7000 բանվոր-բանվորուհիների կողմից:

1928 թ. յերիտասարդների միջազգային որվա (ՄՅՈՒԴ) նախապարաստության ընթացքում կազմակերպվեցին յերիտասարդների տեղական համագումարներ (25 ոգոստոս) Քիլքիսում, Աթենքում, Սալոնիկում, Կավալայում, Աղրինիոնում և մի շարք ուրիշ քաղաքներում, վորոնք արգելվեցին քաշխատական վոստիկանության կողմից: Այս կապակցությամբ ձերբակալվեցին համագումարին մասնակցող բազմաթիվ յերիտասարդ պատգամավորներ և բանվորներ:

Հունաստանում ՄՅՈՒԴ-ը, վորպես միջազգային բանվոր յերիտասարդության հեղափոխա-

կան համերաշխության յեզ պայքարի որ, տու-  
փում եր դեռ 1920 թվականից, այն որքանից,  
յերբ դեռ Հունաստանի կոմյերիտմիուրյունը՝ վոր-  
պես այդպիսին կազմակերպչորեն չեր ձեփակոր-  
ված։ Յեզ քանի Հունաստանի կոմյերիտմիու-  
թյունը զարգանում ու զորանում է, ՄՅՈՒԴ-ի  
տոնակատարությունը զանում է յերիտասարդ  
բանվորների, գյուղացիների, զինվորների և նո-  
վաստիների հեղափոխական համերաշխության և  
զասակարգային թշնամու դեմ միանական հե-  
ղափոխական յելույթների որ։

ԿԻՄ-ի մարտական նշանաբաններով 1927 թ.  
ՄՅՈՒԴ-ի տօնակատարությանը մասնակցեցին մոտ 13.000 յերիտասարդ բանվոր ցուցաբար-  
ներ; 1928—29 և 30—31 թվականներին, ՄՅՈՒԴ-ի  
տօնակատարության նախորյակին, Հունաստանի  
կոմյերիտմիությունը կազմակերպեց աշխատավոր  
յերիտասարդների մասսայական համագումարներ  
և կոնֆերանսներ, վորոնք կրում ելին բացաբ-  
ակ հակամիլիտարիստական և հակապատերագ-  
մական բնույթ։

## ԽՍՀՄ-Ի ՅԵՎ ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Կոմյերիտմիությունը նախաձեռնեց և կազ-  
մակերպեց մի կամպանիա՝ մինական հեղափո-

խության և ԽՍՀՄ-ի պաշտպանության համար  
իմալքերիալիստական ինտերվենցիայի դեմ հեղա-  
փոխական պայքար ծագակելու լողունգով։ Այս  
կամպանիայի շուրջը մորիլիզացիայի յենթարկ-  
վեց 10.000-ից ավելի բանվոր և գյուղացի յերի-  
տասարդություն։ Նա կազմակերպել ե նաև կամ-  
պանիաներ՝ Բալկաններում տիրող ֆաշիստական  
ուսակցությայի դեմ, մասնավորաբար Հարավ-Սլավիայի  
միլիտարիստական, ֆաշիստական դիկտատորայի  
դեմ։ Նա մորիլիզացիայի յե յենթարկել Հունաս-  
տանի աշխատավոր յերիտասարդությանը՝ Հա-  
րավ-Սլավիայի, Բուլղարիայի, Թուրքիայի կոմ-  
յերիտական կազմակերպությունների հեղափո-  
խական պայքարը ֆաշիզմի տեռորից պաշտպա-  
նելու նշանաբանի տակ։

Ծատ, դեպքերում յերբ իմալքերիալիստա-  
կան պետությունների սազմանավերն այցելել  
են Հունական նավահամնդիստները, Հունաստա-  
նի կոմյերիտմիությունն այստեղ ևս հանդես  
ե յեկել իր հեղափոխական մասսայական աշխա-  
տանքով, կտալվելով նավաստիների հետ, նրանց  
շրջանում տանելով հեղափոխական ագիտացիա՝  
նրանց մայրենի լեզվով հրատարակված կոչերի,  
թուցիկների միջոցով, հիշեցնելով նրանց հեղա-  
փոխական ինտերնացիոնալիստական պայքարի,  
միասնական հեղափոխական նակատի անհրա-

մեծությունը՝ դասակարգային թշնամու և իմպերիալիստական պատերազմի դեմ, ԽՍՀՄ-ի և Հինական հեղափոխության պաշտպանության համար:

## ՄԱՍԱՅԱՎԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂՇՈՒՄԸ

Հունաստանի կոմյերիտմիության աշխատանքն՝ իր հեղափոխական գործունեյությանն ոժանդակող մասսայական, յերիտասարդական կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ՝ սկսվում է հատկապես 1927 թվի փետրվարյան կոնֆերենցիայից հետո։ Այդ տարվա ընթացքում ե, վոր հիմնվում ե յերիտասարդների հակածախսական պահակախմբերի կազմակերպությունը (մոտ 700 անդամներով)։ Այդ կազմակերպությունը մասնավորապես Կավալա քաղաքում նշանակալից դեր խաղաց հակահեղափոխական ռեակցիայի և Փաշիստական կազմակերպությունների դեմ մղվող պայքարում (նացիոնալ-դեմոկրատական յերիտասարդական կազմակերպության դեմ և այլն)։

Սակայն այս կազմակերպությունն իր հիմնադրության հենց սկզբից առանձնացած մի խմբի վերածվեց՝ ինչ-վոր տեսորիտական ձգտումներով։ Յեկայն դրա համար ել նրա գոյու-

թյունը յերկար չտևեց և վորպես կազմակերպություն շուտով լուծարքի յենթարկվեց։

Այսուհետև կոմյերիտմիությունն իր աշխատանքը լայնորեն զարգացրեց արհմիություններում, նրանց կից յերիտասարդական սեկցիաներ ստեղծելու ճանապարհավում։ Սակայն, ինչպես այդ տվյալը հետագայի փորձը, յերիտասեկցիաների կազմակերպումը չնայած նրանց շոշափելի նվաճումներին, մի շարք պատճառներով չտվեց պահանջված արդյունքը։ Յեկ այստեղ ե, վոր ի հայտ ե գալիս կոմյերիտմիության աշխատանքի գլխավոր թերությունը։ Այդ թերությունն այն եր, վոր արհմիություններում գոյություն ունեցող յերիտասարդական կոմիտեները դեռ չունեցին գործարանային հիմք և լուրջ կերպով չեյին գրադարանային հիմք և լուրջ կերպով չեյին գրադարանային հիմք և բանվորների և բանվորուհիների առողյա տնտեսական պայքարի կազմակերպման գործով, այդ պայքարն իր քաղաքական բարձրությանը հասցնելու գործով։ Այս ասպարեզում, հակառակ վերջին շրջանում նշվող մի շարք հաջողություններին, Հունաստանի կոմյերիտմիության առաջ դեռ մինչև որս ել դրվագ են հսկայական խնդիրներ, վորոնց վճռական լուծումից ե կախված բանվոր յերիտասարդության մեծամասնությունը կոմյերիտմիության հեղափոխական դրույթ շուրջ համախմբելը։

## ՀԱԿԱՄԻԼԻՑԱՐԻՍՑԱԿԱՆ ՊԱՅՏԱՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ

1927 թվին արևելյան Մակեդոնիայի կոմյերիտական կազմակերպությունը լայն ազիտացիայի մղում, պահանջելով 1926 թ. գորակոչված 1905 թվի ծնվածների ազատ արձակումը: Յեզ կոմյերիտմիության տեղական զինվորական կազմակերպության զեկավարության ներքո՝ հունական բանակի Զ-րդ գիրիզիայի բոլոր գորամառերը շարժում են զեպի զիրիզիայի շտաբը (Դրամա քաղաքում), պահանջելով իրենց անմիջապես ազատ արձակելը: Զինվորական մասսաների հեղափոխական շարժման ճնշման տակ կառավարությունը հարկադրվեց վոչ միայն ազատ արձակել նրանց, այլ յեզ 1905 թվին ծնված բոլոր զինվորներին ամբողջ հունական բանակում: Այստեղ կարեոր ե ընդգծել այն հանգաւանքը, որը զինվորների այդ հեղափոխական յելույթից հետո կառավարությունը չհանդիսեց նույնիսկ վորեվե զինվորի հանձնել զինվորական դատարանի, ինչպես այդ կարելի յեր սպասել ուրիշ առթիվ: Նույն տարին Աթենք քաղաքի հեծելազգնողի գլորոցում խոռվություն ծագեց ուսանող զինվորների մեջ՝ նորից զորացրման պահանջի հիման վրա: Այստեղ ևս զինվորները կրկնակի հաղթանակ տարուն, իրենց զորացրման զուգընթաց հարկադրելով զինվորա-

կան աստիճանավորներին՝ ազատ արձակել նայելի այն կոմունիստ զինվորներին, վորոնի ձերբակար-վել ելին իրենվ խորվարության պարագուխ-ներ: Հակամիլիլիտարիստական շարժումը մասնա-վորապես ուժեղացավ զինվորների և նավաստի-ների սնունդի բարելավման համար բանակում կոմյերիտմիության ծավալած պայքարի հիման վրա:

1928 թվի հունվարի 6-ին 110 բանակարկած նավաստիներ «Նավստաթմոյի» բանտում (վորոնց մեծամասնությունը բանատարկված եր հակամի-լիտարիստական աշխատանքի համար) ապրու-տամբում են վատ սնունդի գեմ և մասսայակա-նորեն լցիկների պատուհանից դուրս են շպը-տում իրենց բերված վորզնուտած ճաշը: Ապստամբ բանտարկյաների զայրույթն իր զագաթնակետին եր հասել: Խցիկներից լավում են հեղափոխական քացականչությունները:

Տեսնելով այդ, բանտի պահակախմբի սպանե-րից մեկն, անմիջապես զինելով նավստիների մի ջոկատ, գնում ե բանտում «կարգը վերականգ-նելու համար»... Սակայն ապստամբած քա-տարկյանավաստիները զինված յերկաթներով ջո-կատը դիմավորում են հեղափոխական վրբուտագին քացականչություններով:

«Կորչի բուրժուական հայրենիքը»—լսվում է լցիկներից:

Սպան հրամայում ե ջոկատին:  
— «Կը բակը»:

Ջոկատը հրաժարվում ե կրակելուց:  
— «Կեցցե՛ կոմունիստական կուսակցությու-  
նը», «Կեցցե՛ կոմյերիտմիությունը», բացական-  
չում են բանտարկյաները, և մինչ սպաները կա-  
տաղում են իրենց համար անսպասելի այդ յերե-  
վույթի առաջ, ջոկատը յեղբայրանում, միանում ե  
ապրատամբած իր դասակարգային յեղբայրներին:  
Յեկ յեղբայրացման այդ պահին յերկու կողմից ել  
թնդում են «հնտերնացիոնալի» մարտական հըն-  
շունները.

«Յեկի՛ր, ում կյանքը անիծել ե,  
Ով նար է, մերկ ե յեկ սրուկ...  
Արդեն վառվում են մեր սրերը,  
Արդեն կովկ յենք սենք ձագում:

## ՊԱՅՉԱՐ ԼԻՎԱԴՄԻՇԻԶՄԻ ԴԵՄ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳԾԻ ԿԻՐԱՌՈՄԱՆ ՀԱՄԱՐ

1927 թվին, Պանգալոսի դիկտատուրայի ան-  
կումից հետո, կուսակցության և կոմյերիտմիու-  
թյան մեջ յերեան յեկագ լիկվիդատորիստա-  
կան մի խումբ Փուլյոփալմսի գլխավորությամբ  
(Հունաստանի կոմկուսի այդ ժամանակա կենտ-  
կոմի քարտուղարը), Այս խումբն ըստ եյության

ուներ աջ ոպղորտունիստական ծրագիր և պրո-  
լետարիատի հեղափոխական շարժման ամենա-  
հիմնական սկզբունքային հարցերի շուրջը տարա-  
ձայնվում եր կուսակցության և կոմինտերնի  
լենինյան դրույթների հետ: Հետագայում նա  
վերջնականապես անջատվեց կոմունիստական կու-  
սակցությունից՝ զարդանալով ու վերածվելով  
հականեղափոխական տրոցկիստական մի հոսանքի:

Հունաստանի կոմկուսի շարքերում լիկվիդարիս-  
տական շարժման ի հայտ գալու շրջանում Հու-  
նաստանի կոմյերիտմիության ամենակարևոր և  
բնորոշ աշխատանքներից մեկն այն ե, զոր նա  
կուսակցության հետ միասին, նրա հետ կողե-  
կողի յեկ նրա դեկավարությամբ կազմակերպ-  
չական ու գաղափարական անորոք պայքար մղեց  
լիկվիդարիստների դեմ, զտեց իր շարքերն ան-  
հարազատ, ոպղորտունիստական քայլայիշ տար-  
րերից, ամբացրեց կազմակերպության մեջ գոր-  
ծարանային սկզբունքով բջիջային սիստեմը և մեկ  
քայլ կատարեց գեղակ առաջ մասսայական կազ-  
մակերպություն դառնալու ուղղությամբ:

## ԲԱՌԻԿԱԴՆԵՐԻ ՎՐԱ

Հունական կապիտալիզմի մասնակի կայու-  
ացումը յերկար չտևեց: 1928 թ. վերջերից սկսում  
են յերեան գալ տնտեսական ճգնաժամի առաջն

նշանները, վորոնք արտահայտվում են ամենից առաջ գյուղատնտեսական մթերքների գների անկման մեջ: 1929 թվին տնտեսական ճգնաժամը ծավալվում է՝ ընդգրկելով յերկրի վողջ տնտեսության բոլոր ճյուղերն անխտիր: Ճգնաժամի հետևանքով վատթարանում ե բանվորա-գյուղացի-ական, մասսաների տնտեսական դրությունը՝ սաստականում ե յերիտասարդների և յերեխաների շահագործումը և այդ հողի վրա ավելի ուժեղ ե սկսում հեղափոխական շարժման վերելքը քաղաքում և գյուղում: Գործադուլային մարտերն ստանում են լայն ծավալ:

1929 թվին գործակուլ են անում 60.000 բանվորներ, վորոնցից 20.000-ից ավելին՝ յերիտասարդ բանվոր-բանվորուհիներ: Այս շրջանում արագ կերպով բարձրանում ե կոմյերիտմիության մարտունակությունը: 1929 թվի հոկտեմբեր ամսին ե, վոր տեղի ունեցան Տասոս կղզու ծխախոտագործ բանվոր-բանվորուհիների հեղափոխական յելույթները, վորոնք բնորոշում են հեղափոխական շարժման նոր ետապը: Տասոս կղզու ծխախոտագործ հեղափոխական բանվորները պայքարի ամենաբուռն շրջանում գրավում են կղզու նավահանգստում խարսխած նավերը յեփ քաղցարեավ են կազմակերպում դեպի Կավալա քաղաքը, քաղաքապետությունից պահանջելով

անհապաղ բավարարել իրենց պահանջները: Դրանից միքանի շաբաթ հետո Ազգինիոնի գործազուրկ պրոլետարները փողոցային պայքարում բռւրժուալիայի հականեղավոխական ուժերի դեմ կանգնեցրին բառիկադներ, վորտեղ ահագին դեր կատարեց կոմյերիտմիությունը՝ ցուցաբերելով հեղափոխական անձնազնության որինակներ: Այնուհետև 1930 թվի դեկտեմբերին և 1931 թվի հունվար-փետրվար ամիսներին՝ գործազրկության դեմ պայքարի միջազգային որվա կապակցությամբ կազմակերպված հեղափոխական յելույթներին մասնակցեցին ավելի քան հինգ հազար յերիտասարդ բանվոր-բանվորուհիներ: 1931 թվին հայագործ բանվորների գործադուլի ու նույն տարվա նոյեմբեր ամսին հինգ հազար կոշկակար բանվորների գործադուլի ընթացքում, Սալոնիկի 1000 ուսանողների և Պատրաս քաղաքի չամչի արտադրության մեջ աշխատող 1200 բանվորների գործադուլներում, 1932 թ. մայիս—հուլիս և դեկտեմբեր ամիսների և բոլոր այլ կարենոր գործադուլային հեղափոխական մարտերում յերիտասարդ բանվոր-բանվորուհիները Հունաստանի կոմյերիտմիության մարտական լոգունգներով առաջարկում եյին իրենց հատուկ տնտեսաքաղաքական պահանջները և ակտիվորեն մասնակցում գործադուլային կոմիտեներին, հաճախ

լինելով գործադրուների ցույցերի և միտինգների պրոլետարական ինքնապաշտպանության առաջավոր պոստում: Աշխատավոր յերիտասարդության աճող ակտիվությունը, նրա տեսակարար կշռի բարձրացումը պրոլետարիատի դասակարգային մարտերում ավելի ու ավելի յե աչքի ընկնում վերջին տարիների ընթացքում: 1929—30, 1931 և մասնավորաբար 1932—33 թվականներում աշխատավոր յերիտասարդության կոմիտեները հեղափոխական պլոֆմիություններին կից կոմիտեները ցույց են տալիս իրենց կազմակերպված դեմքը, կոմյերիտմիության զեկավարությամբ հանդես են դալիս պաշտպաններու բանվոր յերիտասարդության հատուկ շահերը կազմակերպելով ու դեկավարելով առանձնապես յերիտասարդական գործադրությանը: Այսպես, Հավաքում և մետաղագործարանում (Սալոնիկ քաղաքում), Սուֆլի քաղաքի տեքստիլ գործարաններում և «Ֆակտո» կոշիկի գործարանում, ինչպես նաև մի շարք ուրիշ ձեռնարկություններում կոմյերիտմիությունը հարցուրավոր յերիտասարդ բանվոր-բանվորուհիներ եր ընդգրկել գործադրությին պայքարի մեջ: Յերիտասարդ գործադրությունները տնտեսական պայքարով չեն սահմանափակվում: Նրանք իրենց քաղաքական պահանջներն են դնում բուրժուազիայի և նրա

իշխանության առաջ: Բնորոշ և «Ֆակտո» գործարանի բանվորների պահանջը՝ Հունաստանի կոմիտմիության կենտրոնական որդան «Նեռ-լեա» («Յերիտասարդություն») թերթը՝ գործարանում ազատ տարածելու մասին:

## ՀԱԿԱՌԱԿ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ

1929 թվի ՄՅՈՒԴ-ի տոնակատարությունից մեկ շաբաթ առաջ (ոգոստոսի 25-ին) Հունաստանի մի շարք քաղաքներում կազմակերպվեցին մասսայական յերիտասարդական համագումարներ, վորանց մասնակցեցին 6000-ից ավելի յերիտասարդ բանվորներ և բանվորուհիներ: 1930 թվին Կավալա քաղաքում վորոշվեց հրավիրել համագումար: Կոմյերիտմիության զեկավարությամբ կազմակերպված միտինգների, հավաքությունների միջոցով մորիլիզացիայի յենթարկվեց 4000-ից ավելի յերիտասարդ բանվոր: Սակայն վոստիկանությունն արգելեց համագումարը: Այս ժամանակ համագումարը տեղի ունեցավ անլեգալ կերպով: Ցեվ 700-ի մոտ յերիտասարդ ու չափահաս բանվորներ հետևում ելին համագումարի աշխատանքներին, պաշտպանելով այն վոստիկանության հարձակումներից: Բացի դրանից կազմակերպվեցին յերկու յերիտասարդական կոնֆերենցիաներ,—ծխախոտի և կաշվի բանվոր-

Ների: Խոկ 1929 թվի սկզբներին, Համահունական բանվորների միացյալ համագումարից հետո, կոմյերիտմիությունը կազմակերպեց բանվոր յերիտասարդների առաջին Համահունաստանյան կոնֆերենցիան:

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴԻԲ

Կոմյերիտմիության կարևորագույն հաջորդությունների շարքին են պատկանում բանվորական Փիզկուլաշարժման ստեղծման և կազմակերպման գործում ձեռք բերած նվաճումները: Բանվորական Փիզկուլտուրայի ֆեղերացիան (Կարմիր Սպորտինտերնի սեկցիա) իր կազմակերպումից մինչև այժմ ել գտնվում ե Հունաստանի կոմյերիտմիության անմիջական ղեկավարության տակ: Ֆիզկուլտուրայի բանվորական կազմակերպությունները կոմյերիտմիության համար հանդիսանում են այն կարևորագույն լծակը, վորովնա Փաշխտական մարզական կազմակերպությունների շարքերից պոկլում և հազարավոր աշխատավոր յերիտասարդների և նրանց մասնակից ե դարձնում հեղափոխական շարժման:

Բանվորական Փիզկուլտկազմակերպությունն իր մասնաճյուղերն ունի Հունաստանի գրեթե բոլոր դիմավոր քաղաքներում և գյուղերում:

Նա իր շարքերում ներկայիս ընդդրկում ե մոտավորապես 4500 ֆիզկուլտուրնիկներ:

Բանվորական Փիզկուլտկազմակերպությունը սկսեց ծավալել մասսայական աշխատանք: Բեռլինի յերկորդ միջազգային Կարմիր Սպարտակիացային մասնակցելու նշանաբանի տակ՝ նա մորիլիզացիայի յենթարկեց 10.000-ից ավելի հույն, հրյա և հայ Փիզկուլտուրնիկներ: 1930 թվականին, զատկավայրերու որը (ապրիլ) կազմակերպվեցին «Կարմիր հանդիպումներ» ամբողջ Հունաստանում, վորոնց մասնակցությունը բերին հազարավոր յերիտասարդ բանվորներ: Նույն տարվա հուլիս—սեպտեմբեր ամիսներին Վոլոս քաղաքում տեղի ունեցավ Սթենք—Վոլոսի հանդիպումը: Այդ հանդիպումը վերջում կոմկուսի և կոմյերիտմիության հեղափոխական լուգուններով և կարմիր դրոշականերով՝ մարտական ցույցի վերածվեց: Այս ցույցին մասնակցեցին 1500-ից ավելի յերիտասարդ բանվորներ, վորոնցից 70—80 հոգին զինվորներ: Ցուցարարներն առաջ են շարժվում Վոլոս քաղաքի խոշորագույն պողոտաներից մեկով՝ ձանապարհին ավելի խտանում են ցուցարարների շարքերը: Հեղափոխական Փիզկուլտուրնիկների այդ մարտական յելույթի դեմ շարժման մեջ են դրվում պետական զինյալ ջոկատները, վորոնք զաղանարար հարձակվում են

հեղափոխական ցուցարար Փիդկուլտուրնիկների վրա:

Բնորոշ ե հետևյալ մոմենտը.—յերբ Փաշիսա վոստիկանները հարձակում են գործում կարմիր դրոշը պահպանող ընկերոջ վրա՝ նրանից այն խելու նպատակով, ցույցին մասնակցող զինվորները դրույկակրին պատճանում են վոստիկանության հարձակումից: Ցույցի ընթացքում ձերբակալված 31 Փիդկուլտուրնիկներից 19-ը հատուկ որենքի խախտման հանցանելով դատապարտվեցին 325 ամսվա բանակության յեզ ախորի:

1934 թ. Մուկվայի Համաշխարհային սպարտակիադային լավագույն ցուցանիշներով մասնակցելու նշանաբանով Հունաստանի բանվորական Փիդկուլտ-ֆեղերացիան ներկայիս ծավալում և լայն մասսայական աշխատանք: Արդեն տեղի յեն ունեցել քաղաքային և շրջանային սպարտակիադաներ: Բանվորական Փիդկուլտ-ֆեղերացիայի հեղափոխական գործունեյության ուժեղացման հետ միասին սաստկանում ե նրա գեմ Փաշիստական սպիտակ տեսորը: Բանտարկում ու աքսորում են հեղափոխական Փիդկուլտուրնիկներին, զինված հարձակում են գործում նրա կազմակերպությունների դրասենյակների վրա, ջարդ ու փշուր անելով Փիդկուլտուր պիտույք-

ները (Աթենք, Պիրեա, Քիլիքի, Վոլոս և այլն): Սակայն հակառակ կապիտալի տեսորի՝ կոմյերիամիությունը ծավալում է իր աշխատանքները: Խտացնելով հեղափոխական Փիդկուլտուրնիկների շարքերը:

## ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՐՈՒՄ Ե ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ԴԵՐ

Իսչպես բոլոր կապիտալիստական պետությունները, կապիտալիստական Հունաստանը ևս վարում է յերկրում ապրող ազգային փոքրամասնությունները ճնշելու դաժան քաղաքականություն:

Հունաստանի բուրժուազիան գործադրում է կուլտուրական և քաղաքական ճնշում՝ հելենացնելու, իր աղջի մեջ ձուլելու համար ազգային փոքրամասնությունները (մակեդոնացիներ, թյուրքեր, հայեր, հրյաներ): Նա ազգամիջյան ատելություն ու թշնամություն սերմաններով ազգային փոքրամասնությունների մեջ գործում ե քայքայել ազգային փոքրամասնությունները: Անտիսեմիտական շարժումը Հունաստանում պաշտպանվում և ղեկավարվում է հույն բուրժուազիայի կողմից և առանձին շրջաններում (Մակեդոնիայում) ստանում ե ջարդերի և տեսորիստական վայրագ ակտերի բնույթ: Մակեդոնիայի նահան-

գապետ Ղոնաղասի հսկողության տակ ազգայնական ֆաշիստական կազմակերպությունները (ուսանողների ազգայնական միություն, «Ելաս» ազգայնական միություն (ԵԵԵ), «Սիդիրա Իրինի» («Յերկաթյա խաղաղություն») և այլն) հրկիզում, այրում ու փչացնում են ամբողջ հրեյական գաղթակայանները, առանց կանք առնելու. կանանց և մանուկների սպանության առաջ (Սալոնիկ 1931 թ.): Ճնշված ազգային փոքրամասնությունների յերիտասարդությունն ավելի սուր կերպով ե զգում ազգային և դասակարգային շահագործման սաստկությունը: Ավելի վատ ե այն յերիտասարդների կացությունը, վորոնք գնում են բուրժուական բանակում ծառայելու: Միլիտարիստներն անսառնի նման են վերաբերվում նրանց հետ, հայնայանք, ծեծ և տաժանակիր աշխատանք—ահա նրանց «դաստիարակելու» բուրժուական մեթոդները: Հունաստանի կոմիունն ու կոմյերիտմիությունը միակ հեղափոխական կազմակերպություններն են, վորոնք պայքարում են ազգային փոքրամասնությունները կապիտալիստների լծից լիակատար ազատագրելու համար:

Սակայն այստեղ պետք են նշել այն իրողությունը, վոր չնայած գոյություն ունեցող նպաստավոր պայմաններին, կոմյերիտմիությունը չկարողացավ իր շարքերը նվաճել ազգային փոքրամասնությունը:

թյունների աշխատավոր յերիտասարդության լայն մասաներին, կազմակերպել ու ղեկավարել նրանց պայքարը հունական կապիտալիզմի և ֆաշիստական տեռորիստական ակտերի դեմ: Այս—Հունաստանի կոմյերիտմիության աշխատանքի հիմնական թերություններից մեկն ե: Սակայն վերջերս աշխատանքի այս ասպարեզում ևս յեղան դրական առաջին քայլերը և ձեռք բերվեցին վորոշ հաջողություններ: Մյուս ազգային փոքրամասնությունների հետ համեմատած՝ կոմյերիտմիության կազմակերպչական և գաղափարական աղղեցությունն ավելի արագ կերպով ծավալվեց հրյաների և հայերի մեջ՝ մասնավորաբար հեղափոխական վերելքի շրջանում: Կոմյերիտմիության աշխատանքի շնորհիվ եր, վոր այդ փոքրամասնությունների բանվոր և աշխատավոր յերիտասարդության շարքերից առաջ յեկան հեղափոխական պայքարի լավագույն մարտիկներ, վորոնք բարձր են բռնում կիՄ-ի մարտական ինտերնացիոնալիզմի դրոշը:

1931, 1932 և 1933 թթ. հրյաների շրջանում, վորպես յերիտասարդական բանվորական կազմակերպություն, գործում եյին 4—5 ֆիզկուլտիսմբեր, վորոնք մտնում եյին Հունաստանի Փիղկուլտուրան պորադական ֆեղերացիայի մեջ, ղեկավարվելով կոմյերիտմիության կողմից:

Հայ աշխատավոր յերիտասարդության մեջ և տարվեց զգալի հեղափոխական մասայական կազմակերպչական աշխատանք, վորի վորպես արդյունք այսոր Հունաստանի բանվորական ֆիզկուլտուրայի ֆեդերացիայի շարքերում պաշտոնավես կա ու դորձում է ՀԲՄՄ (Հայ Բանվորական Մարզական Միություն) իր մոտ 200 անդամներով։ Այդ միությունն 1932 թ. ուներ 7—8 մասնաճյուղ Հունաստանի ամենազլիսավոր քաղաքներում՝ Աթենք, Պիրեա, Իրաքլիոն (Կրետե կղզու նավահագիտ քաղաք), Սալոնիկ, Քսանդրի և այլն։ ՀԲՄՄ-ը կազմակերպվեց 1928 թ. ֆետրվարի վերջերին։ Ֆաշիստական ՀՄԼՄ-ից (Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն) դուրս յեկած մի խումբ բանվորական հակաֆաշիստական և հակադաշնական տարրերի նախաձեռնությամբ։ 1929 թվին կոմյերիտմիության զեկավարությամբ դումարվեց ՀԲՄՄ-ի առաջին համագումարը։

Հունաստանի կոմյերիտմիության և բանվորական ֆիզկուլտուրեկերացիայի բոլոր հեղափոխական յնույթներում հայ. բանայերի աշխատական գույքական պահպան և գտնվում են պայքարի առաջին գծերում։ Պիրեա քաղաքի մայիսեկան ցույցերին, (1929), 1930 թվի ապրիլ ամսի կարմիր հանդիպումներում՝ Կալիթեխայում (Աթենք) արգարձանի շրջանային սպարտակիադա-

ներում, ցույցերում և միտինգներում, հայ ֆաշիստների և պետական դինված ուժերի գետ կռվելիս (Կալիթեյա) հայ աշխատավոր մարզի կուտակություններու ցույց տվին իրենց հեղափոխական պայքարի պատրաստականությունը, կամքն ու մարտունակությունը։

ՀԲՄՄ-ը Հունաստանի բանվորական ֆեդերացիայի լավագույն սեկցիաներից մեկն է, վորի շարքերում աճել են զգալի թվով հայ աշխատավոր յերիտասարդներ, վորոնք խտացրել և խտացնում են կոմյերիտմիության շարքերը։

## ՊԱՏԵՐԱՋՄԻ ՑԵՎ ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՄԱՆ ԳԵՐՈՍԿԱԽՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ

Հեղափոխական վերելի շրջանում ավելի ցայտուն կերպով ե դրակորպում զորակոչված յերիտասարդական մասսաների, պայքարի պատրաստականությունն ու մարտունակությունը։ Նրանք չեն սահմանափակվում միայն իրենց անտեսական կենցաղային գրության բարելավաճան պահանջներով ցաղացին։ Պյու (պայքար լավ մնադի, զգեստի համար և այլն)։ Այլ պահանջների գնելով միլիտարիստների առաջ զինկը, պահանջներ զնելով միլիտարիստների տալու փորսերին քաղաքական ազատություններ տալու մասին։ Հունաստանի կոմյերիտմիության հակամասին։ Հունաստանի կոմյերիտմիության հակամասարիստական աշխատանքի և պայքարի պատմիլիտարիստական աշխատանքի և պայքարի պատ-

մության մեջ մենք ունենք բազմաթիվ որինակներ, յերբ զինվորներն ու նախաստիներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել բանվորների և գյուղացիների ընդհանուր հեղափոխական պայքարին՝ դասակարգային վճռական մարտի մոմենտում յեղբայրանալով նրանց հետ, այն ժամանակը յերբ միլիտարիստները նրանց ուղարկել են բանվորա-գյուղացիական մասսաների հեղափոխական յելույթները ջախջախելու, խեղդելու համար: Եերենք միքանի որինակներ:

1925 թվին տրանսպորտի և ելեկտրական հաղորդակցության բանվորների գործադուլի ժամանակ բուրժուազիայի կառավարությունը փորձում է ուղամական նամատորմիղի նախաստիներին ոգտագործել՝ վորպես գործադուլաբեկների: Սակայն հակառակ կառավարության և անգլիական ընկերության ցանկության, հեղափոխական նախաստիները վոչ միայն գործադուլաբեկ չեղան, այլ և սաբոտաժի յենթարկելով հաղորդակցության միջոցները միացան գործադուլավորների հերոսական պայքարին:

